Արձանագրություն N 2
«ԱՊՔ-ԳՀԱՇՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման միջոցով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Աբովյան Ուսանողական նրբ. 4 *«18» «05» 2020 ժ.11:00*

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Գևորգ Սողոմանյանը
Հանձնաժողովի անդամներ՝ Սոնա Բաղդասարյանը, Հայկ Մակյանը
Հանձնաժողովի քարտուղար՝ Նաիրա Մկրտչյանը

1. Տեղեկություններ «ԱՊՔ-ԳՀԱՇՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման հայտեր ներկայացրած մասնակիցներ մասին

(Գ.Սողոմոնյան)

Ընդունել ի գիտություն, որ հայտերը բացվել են հրավերը հրապարակելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 11:00-ին (մայիսի 18-ին), որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

ՀՀ ԿԳՄՍՆ «Աբովյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ -ի կարիքների համար «ԱՊՔ-ԳՀԱՇՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

1	«Կապիտալ Փրոջեքթ» ՍՊԸ		Ք. Երևան Կոմիտաս պող. 16շ. Բն. 22, ՀՎՀՀ 00146655, էլ. փոստ capital.project@hotmail.com
2	«Արխի Թուլս» ՍՊԸ		Արարատի մարզ, գ. Ուստան, Երևանյան 13 ՀՎՀՀ 04234306, էլ. փոստ architools@mail.ru

Որոշում թիվ 1.

Հրավերով սահմանված՝ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

2.1 Մասնակիցի կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

	Մասնակից	Նախահաշվային գին	«Կապիտալ Փրոջեքթ» ՍՊԸ			«Արխի Թուլս» ՍՊԸ		
N	Աշխատանքի անվանումը		արժեք	ԱԱՀ	Ընդհանուր	արժեք	ԱԱՀ	Ընդհանուր
1								
1	ՀՀ ԿԳՄՍՆ «Աբովյանի պետական քոլեջ» ՊՈԱԿ -ի կարիքների համար՝ նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ	600 000	2 200 000	----	2 220 000	500 000	100 00	600 000

2.2 Մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկում չկան թվաբանական անճշտություններ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Գ.Սողոմոնյան)

3.1 Մասնակիցներ կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը:

4. Տեղեկություն «ԱՊՔ-ԳՀԱՇՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակիցների մասին

(Գ.Սողոմոնյան)

4.1 Գնահատման արդյունքներով «ԱՊՔ-ԳՀԱՇՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հանձնաժողովը որոշեց ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ.-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետով մերժել «Կապիտալ Փրոջեքթ» ՍՊԸ-ի հայտը (գնային առաջարկը ներկայացվել է հրավերի պահանջներին անհամապատասխան՝ բարձր է նախահաշվային գնից) և

ներկայացված գնային առաջարկի հիման վրա ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող ճանաչել «Արխի Թուլս» ՍՊԸ-ին:

4.2 Հանձնաժողովը որոշեց «ԱՊՁ-ԳՀԱՇՁԲ-20/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի ընտրված մասնակից ճանաչել «Արխի Թուլս» ՍՊԸ-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

5. Գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Գ.Սողոմոնյան)

Հիմք ընդունելով սույն արձանագրության 4.2-րդ կետով ընդունված որոշումը ինչպես նաև «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին կետը

«Արխի Թուլս» ՍՊԸ-ի ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել «Արխի Թուլս» ՍՊԸ-ին:

Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը

"Գնումների մասին" ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ է սահմանվում սույն հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընտրված մասնակցի հետ կկնքվի պայմանագիր որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու դեպքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Գ.Սողոմոնյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելուն օրվան հաջորդող աշխատանքային օրը ժամը 14:30-ին, ք. Աբովյան, Ուսանողական նրբ 4 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Գ.Սողոմանյան
Անդամներ՝		Ս.Բաղդասարյան
		Հ.Մակյան
Քարտուղար՝		Ն.Մկրտչյան